ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի կիսանդրին Երևան քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը ծնվել է 1965թ. ապրիլի 21-ին Թալինի շրջանի Արեգ գյուղում (2009թ. վերանվանվել է Թաթուլ)։

1972-1982թթ. սովորել է տեղի (1991թ. անվանակոչվել է Թաթուլ Կրպեյանի անվան) միջնակարգ դպրոցում:

1982-1983թթ. սովորել է Թալինի տեխնիկական թիվ 29 ուսումնարանում:

1983թ. զորակոչվել է խորհրդային բանակ, սակայն 1985թ. սրտի ծանր վիրահատությունից հետո զորացրվել է՝ ստանալով զինծառայության 2-րդ խմբի հաշմանդամության կարգ։

1986թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի նախապատրաստական բաժին, այնուհետև՝ պատմության ֆակուլտետ:

1988թ. անդամակցել է «Միացում» կազմակերպությանը՝ դառնալով Արցախյան շարժման ակտիվ մասնակից:

1990թ. Թաթուլ Կրպեյանը մեկնել է Գետաշեն՝ որպես պատմության ուսուցիչ, իրականում՝ Գետաշենի ինքնապաշտպանության ղեկավար: 1991թ. ապրիլի 30-ին Գետաշենում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ուժերի աջակցությամբ, ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատների (ՕՄՕՆ) կողմից իրագործվող, Արցախը հայաթափելու «Օղակ» գործողությունը կանխելիս՝ մարտական ընկերների հետ զոհվել է:

Թաթուլ Կրպեյանի աճյունն ամփոփված է հայրենի Թաթուլ գյուղում, որտեղ կառուցված է նրանց հիշատակը հավերժացնող հուշահամալիր։

ՀՀ Նախագահի 1996թ. սեպտեմբերի 20-ի հրամանագրով՝ ՀՀ պաշտպանության գործում մատուցած համազգային նշանակության բացառիկ ծառայությունների համար երկրապահ ջոկատի հրամանատար Թաթուլ Կրպեյանին հետմահու շնորհվել է «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչումը։

Երևան քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգու տարածքում ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տ. Բարսեղյանի և Թաթուլ Կրպեյանի ընտանիքի կողմից։

Քանդակագործ Լ. Թոքմաջյանի և ճարտարապետ Գ. Բաբաջանյանի կողմից հեղինակած Թաթուլ Կրպեյանի կիսանդրին Երևանի քաղաքապետին կից գեղարվեստի հանձնաժողովի կողմից արժանացել է հավանության։

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ